«Դեդալ» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Եղվարդի մարմարացված կրաքարերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկման

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ութ Յ Ու Ն

22.11.2019թ. **ք. Կապան**

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/ և ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով՝ Կապանի համայնքապետարանի նիստերի դահլիճում 2019 թվականի նոյեմբերի 19-ին, ժամը 14:00-ին տեղի ունեցավ «Դեդալ» ՍՊԸ կողմից ներկայացված Սյունիքի մարզի Եղվարդի մարմարացված կրաքարերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ 2-րդ հանրային քննարկումը:

Քննարկմանը ներկա էին «Դեդալ» ՍՊԸ տնօրեն Ռաֆիկ Համբարձումյանը, Կապանի համայնքապետարանի աշխատակիցներ, համայնքի բնակիչներ:

Հանրային քննարկման մասնակիցների անհատական կազմը կցվում է սույն արձանագրությանը:

Հանրային քննարկումը վարեց Կապանի համայնքապետարանի գյուղատնտեսության և հողօգտագործման բաժնի պետ՝ Ավետիք Համբարձումյանը: Նա ողջունեց ներկաներին, ընթերցեց օրակարգը: Որպես ծանոթություն հիշեցրեց, որ հանրային քննարկման վերաբերյալ կարելի էր ծանոթանալ ՀՀ բնապահպանության նախարարության պաշտոնական կայքում /www.mnp.am/, «Հայաստանի Հանրապետություն» օրաթերթի 2019 թվականի նոյեմբերի 6-ի թիվ 190 համարում, ինչպես նաև Կապանի համայնքապետարանի պաշտոնական կայքի հայտարարությունների բաժնում (www.kapan.am):

Խոսքը փոխանցվեց «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ Զարուհի Զուռնաչյանին:

- Տեղեկացնեմ, որ համաձայն ՀՀ գործող օրենսդրության, որպես «Ա» կատեգորիայի գործունեություն՝ բոլոր հանքավայրերը ենթակա են շրջակա միջավայրի փորձաքննության 2 փուլով, 4 հանրային քննարկումների իրականացմամբ: Այսօր Ձեզ

հետ միասին իրականացնում ենք 2-րդ հանրային քննարկումը՝ ինչը նվիրված է արդեն որոշման նախագծին, այսինքն ընկերությանը սահմանված կարգով տրամադրվելու է տեխնիկական առաջադրանք և, իրենք այդ տեխնիկական առաջադրանքի համաձայն՝ ամրագրված պահանջներով, կազմելու են շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ամբողջ նախագծային փաթեթը՝ կից փաստաթղթերով: Այնուհետև ներկայացնելու են լիազոր մարմին, որպեսզի ստանան պետական փորձաքննություն: Բացի դրանից, այսօրվա մեր հանրային քննարկումը նվիրված է, թե հանքավայրի շահագործման դեպքում ի՞նչ ազդեցություններ կարող են լինել շրջակա միջավայրի բաղադրիչների վրա՝ օդի, հողի, ջրի և թե ի՞նչ խնդիրներ եք տեսնում դուք՝ որպես համայնքի ներկայացուցիչներ: Եթե կհնչեն առաջարկություններ, դիտողություններ, ապա կամ հայտը կլրամշակվի, կամ կներառվի տեխնիկական առաջադրանքի պահանջներում: Հիմա նախագծողը կներկայացնի կազմած նախնական գնահատման հայտը, եթե լինեն հարցեր կքննարկենք:

Զեկույցով հանդես եկավ նաև նախագծող Սահարոն Գևորգյանը:

- Առաջին հանրային քննարկումից հետո «Դեդալ» ՍՊԸ կողմից հանձնարարություն է ուղարկվել նախագծող ձեռնարկությանը, որպեսզի կազմվի շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական հայտ: Հայտում ընդգրկված է համառոտ գործունեության բնութագիրը՝ հանքի արդյունահանման նախագիծը, շրջակա միջավայրի վրա ելակետային վիճակը, տրված են սպասվելիք ազդեցությունները և այդ ազդեցությունների վերացման հնարավոր ճանապարհները, ուղղությունները: Հայտն ուղարկվել է շրջակա միջավայրի նախարարություն, ուսումնասիրվել է մասնագետների կողմից, ընդունվել է և այսօր ներկայացվում է համայնքի քննարկմանը: Հավանության դեպքում, եթե կտրվեն առաջարկություններ և դիտողություններ՝ կլրամշակվի, իսկ եթե ոչ՝ ձեռնարկությունը կստանա տեխնիկական առաջադրանք նախագծային փաթեթի կազմով՝ շրջակա միջավայրի հաշվետվությամբ, որի հիման վրա մենք կկազմենք ամբողջ նախագծային փաթեթը՝ լեռնային մասով, շրջակա միջավայրի հիմնական գնահատման հաշվետվություն, կկազմենք փակման ծրագիր, բնապահպանական կառավարման ծրագիր և թափոնների կառավարման պլան: Հաջորդ լսումների ժամանակ կներկայացնենք համայնքի քննարկմանը, ամբողջ փաթեթը արդեն մանրամասն հաշվարկներով, լուծումներով, սպասվող փոշու քանակը, արտանետումները և հավանության արժանանալու դեպքում կուղարկենք արդեն

շրջակա միջավայրի նախարարություն՝ փորձաքննության: Այսինքն՝ 3-րդ հանրային քննարկումների ժամանակ արդեն լրիվ մանրամասն կներկայացնենք ամբողջ նախագծային փաթեթը՝ սպասվելիք ազդեցություններով:

Հարց (Ավետիք Համբարձումյան)

- Ի՞նչ նկատի ունեիք այս պահին հանքի փակում ասելով:

Պատասխան (Սահարոն Գևորգյան)

- Բոլոր հանքավայրերը շահագործելուց հայտում ներառում ենք 50 տարի հետո փակման ծրագիր: Այժմ տալիս ենք փակման ծրագիր, սակայն փակումից 2 տարի առաջ այդ ծրագիրը պետք է թարմացվի: Այսօրվանից արդեն որոշակի գումարներ են ռեզերվացնում, որպեսզի փակման ծրագրով նախատեսված աշխատանքներն իրականացվեն:

Մեջբերում (Զարուհի Զուռնաչյան)

- Փակումն առանձին ևս ենթակա է շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության և, բոլոր հանքավայրերը՝ փակումից 2 տարի առաջ, նախագծային հայտ են կազմում ու դիմում նախարարություն, որպեսզի նորից ստանան դրական փորձաքննության ուսումնասիրություն:

Քննարկման ավարտին Ավետիք Համբարձումյանը շնորհակալություն հայտնեց մասնակիցներին մասնակցության համար և քննարկումը հայտարարեց ավարտված:

Կապան համայնքի ղեկավար **Գևորգ Փարսյան**

«Դեդալ» ՍՊԸ տնօրեն **Դավիթ Համբարձումյան**

Հանրային քննարկման վարող՝
Կապանի համայնքապետարանի գյուղ.
և հողօգտ. բաժնի պետ **Ավետիք Համբարձումյան**

Արձանագրող՝ Կապանի համայնքապետարանի
գյուղ. և հողօգտ. բաժնի առաջատար մասնագետ **Աստղիկ Մկրտչյան**